միւսի հանդէպ «երբեք խէթ չէ ունեցել, թէ այս իմն է, այն՝ քոնը եւ կամ քոնը շատ է, իմը՝ քիչ», այլ ամենքն էլ իմացել են իրենց տեղը «եթէ հարկ, եթէ պատիւ, եթէ պատիժ» (134)։

Յ. Շահամիրեանը մեռած պիտի լինի տակաւին երիտասարդ, բայց քանի՛ տարեկան եւ ե՛րբ — ստոյգ չենք կարող ասել։ Յամենայն դէպս 1775 թուին նա արդէն մեռած պիտի լինէր, որովհետեւ այդ թուին նրանց տպարանում տպուած «Պատմութիւն մնացորդաց հայոց եւ վրաց» գրքի տպագրիչն այլեւս նա չէ, այլ եղբայրը՝ Եղիազարը1)։

«ՈՐՈԳԱՅԹ ՓԱՌԱՅ»

Երկու աշխատութիւն ունի Յ. Շահամիրեանը, երկուսն էլ քաղաքական բովանդակութեամբ։ Առաջինը լոյս է տեսել իր տպարանում 1772 թ. եւ խորագիրն է «Նոր տետրակ որ կոչի յորդորակ»։ Երկրորդը լոյս է տեսել նոյն տեղում, մի տարի յետոյ, 1773 թ. եւ կոչւում է «Որոգայթ փառաց» վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան»։

Մեզ զբաղեցնողը երկրորդ գիրքն է, «Որոգայթ փառաց»ը ,որի անունն ու տպագրութեան հանգամանքները հեղինակի կողմից ձեւակերպուած են այսպէս2) — «Գիրք անուանեալ Որոգայթ Փառաց վասն կալանաւորելոյ ամենայն գործ անկարգութեան։ Շարադրեցեալ Յակոբայ Շահամիրեանց՝ Նոր Ջուղայեցւոյ առ ի օգուտ յաղգին հայոց։ Ի Հայրապետութեան Տեառն Սրբազան Սիմէոնի ամենայն Հայոց կաթողիկոսի ի Վաղարշապատ։ Ի թագաւորութեան Յոդոսատփայլ Տեառն Երկրորդի Հէրակլիսի ի Թիֆղիս։ Ցամի Տեառն Փրկչին մերոյ Քրիստոսի 1773։ Եւ ի թուին թուականութեան հայոց 1222։ Ի հնդիկս եւ ի Մայրա՛ Քաղաքն Մադրաս։ Ի տպարանի նոյն Յակոբայ Շահամիրեանց»։

Գիրքը բաղկացած է երկու գլխաւոր մասից կամ ինչպէս ինքն է անուանում՝ երկու հատորից։ Առաջին մասը մի ընդարձակ յառաջաբան կամ ներածութիւն է, 139 երես, առանց խորագրի։ Երկրորդ մասը, որ կազմում է գրքի մեծագոյն բաժինը, 140–413 երես, հաւաքածոն է բազմազան օրէնքների, նախագծերի եւ զանազան պաշտօնական գրութիւնների նմոյշների, որ հեղինակն առաջարկում է ապագայ անկախ Հայաստանում գործածելու համար։ Ներածութիւնից առաջ գտնւում է մի փոքրիկ «Նախերգանք առ պատուելի ընթերցողդ», իսկ օրինագծերից եւ պաշտօնական թղթերի նմոյշներից յետոյ անմիջապէս գալիս է բովանդակութեան մանրամասն ցանկը, որից յետոյ էլ մի փոքրիկ վերջին խօսք, «Վերջաբանութիւն գրքիս» վերնագրով։

Նախերգանքի մէջ — ինչպէս եւ յաճախ յառաջաբանի մէջ — հեղինակը ինքը բնորոշում է գիրքը եւ նրա նպատակը։ Մի կողմից — ասում է նա — իր գիրքը մի խնձոր է, «գունով կարմիր, տեսլեամբ գեղեցիկ, հոտով անուշ եւ թոչակաւ քաղցր», որ ընծայաբերւում է բոլոր «բարեպաշտ», «առողջ բնութիւն» եւ «յստակ խառնուածք» ունեցող հայ մարդկանց։ Միւս կողմից՝ նա «որոգայթ մի է անբեկանելի, կազմեալ իրաւամբ եւ արդարութեամբ» բոլոր նրանց համար, որոնք «կամեցին ուխտաղանց լինելով, գործել զչարիս»։ Մարդը իր փոփոխական բնութեան պատճառով — աւելացնում է հեղինակը — տրամադիր է չարիքներ գործելու։ Հետեւաբար, անհրաժեշտ է մի արգելք, մի որոգայթ, որը «չարագործի բոլոր զգայարանները բռնի եւ պահի անշարժ», որպէսզի նրա ձեռքն այլեւս չկարողանայ շարժուել՝ չարագործութիւն անելու համար։

Այդ արգելքը կամ որոգայթը ահաւասիկ իր գիրքն է։

Յառաջաբանի մէջ — ինչպէս ասացինք — նա բազմաթիւ անգամներ նորից ու նորից ընդգծում է գրքի կրկնակի նպատակները եւ մի անգամ էլ այսպիսի պատկերաւոր ձեւով սահմանում. «իր գիրքը լինելու է առաջին՝ «Իբր կացին մի ծանր վասն խորտակելոյ լուծն ծառայութեան եւ բնականապէս ազատ առնելոյ ամենայն բնութիւն մարդոց». երկրորդ՝ նա հանդիսանում է «Որոգայթ մի հնարագիտութեան, զի ընդ իւր քարշելով, կալանաւորեսցէ

---

1) Հ. Ղազիկեան՝ «Հայկ. նոր մատենագ. եւ Հանրագիտ.», Լէօ՝ «Հայկ. Տպագր.» Բ.

2) Գրքի անփոփոխ արտատպութիւնը կատարուել է Թիֆլիսում 1913 թ., Ղուկասեան մատենաշար թիւ 9, որ եւ մենք ունենք մեր ձեռքի տակ։